ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

0009, ՀՀ, ք. Երևան, Կորյունի 15/1, 010 511 820, www.court.am

N ԴԴ-2-Ե- Ե-12

« 08 » հունվարի 2026թ.

«ՍԴԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-Ի
ՏՆՕՐԵՆ Մ. ՍԱՖԱՐՅԱՆԻՆ
(հասցե՝ ք. Երևան, Սմբատ Զորավարի 11/3)

Հարգելի՛ պարոն Սաֆարյան,

Սույնով ծանուցում եմ, որ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/24» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ձևով գնում կատարելու ընթացակարգով Դատական դեպարտամենտի կարիքների համար գրասենյակային, կենցաղային, տնտեսական ապրանքների, ՀՀ զինանշանների և դրոշների ձեռքբերման նպատակով հայտարարված գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2025թ. դեկտեմբերի 18-ի որոշմամբ 22-րդ չափաբաժնի մասով «ՍԴԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն հայտարարվել է ընթացակարգի ընտրված մասնակից:

Ընթացակարգի 22-րդ չափաբաժնի մասով, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, սահմանվել է անգործության ժամկետ. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 4-րդ մասի հիմքով անգործության ժամկետի ավարտի օր է համարվել 2025թ. դեկտեմբերի 29-ը: Հիշյալ անգործության ժամկետում չի բողոքարկվել պայմանագիր կնքելու մասին որոշումը:

Տեղեկացնում եմ, որ կնքվելիք պայմանագրի նախագիծը ներկայացվում է eauction.armeps.am համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով և առաջարկում՝ սույն ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալու օրվանից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված պայմանագիրը կցել Համակարգ, իսկ որակավորման և պայմանագրի ապահովումների բնօրինակները պատվիրատուին ուղղված ուղեկցող գրությամբ ներկայացնել Դատական դեպարտամենտ (հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1):

Որակավորման և պայմանագրի ապահովումները ներկայացվում են Ձեր կողմից միակողմանի հաստատված հայտարարությունների՝ տուժանքների («ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/24» ծածկագրով ընթացակարգի հրավերով ներկայացված օրինակելի ձևերին /համապատասխանաբար Հավելված 3.2, որում «Շահառուի հաշվի համարը» լրացվում է՝ 900008000664 և Հավելված 4.1, որում «Շահառուի հաշվի համարը» լրացվում է՝

900005000758/ համապատասխան) կամ կանխիկ փողի ձևով (Կանխիկ փողի ձևով ներկայացված որակավորման ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000698» գանձապետական հաշվին, իսկ պայմանագրի ապահովումը՝ «900008000664» գանձապետական հաշվին):

Որակավորման ապահովման չափը հավասար է գնվելիք ապրանքի գնման գնի 15 տոկոսին, իսկ պայմանագրի ապահովման չափը կազմում է գնման գնի 10 տոկոսը:

Վերոնշյալ ժամկետում անհրաժեշտ փաստաթղթերը չներկայացնելու դեպքում մասնակիցը զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Հարգանքով՝

ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

ԱՐՇԱԿ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

Կատ՝. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/24» ծածկագրով
գնման ընթացակարգի համակարգող՝ Գ. Դադիվանյան
Հեռ.՝ /+37410/ 511-783, 511-788